

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2013Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Կոտայքի մարզի բնակչության թիվը 2013թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 253.8 հազար, որը կազմում է հանրապետության ողջ բնակչության 8.4%-ը, որից 137.3 հազ. քաղաքաբնակներ են (54.0%), 116.5 հազարը՝ գյուղաբնակներ (46.0%):

2013թ. առաջին կիսամյակում մարզում ծնվածների թիվը կազմել է 1687 մարդ կամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 57-ով պակաս, իսկ մահացածների թիվը ավելացել է 7-ով և կազմել 1197 մարդ: Բնական աճը կազմել է 490 մարդ:

Գրանցված ամուսնությունների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 56-ով՝ կազմելով 761, ամուսնալուծությունների թիվը ավելացել է 28-ով՝ հասնելով 134-ի:

2013թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզում թողարկվել է 66669.3 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 53766.1 մլն. դրամի փոխարեն կամ աճը կազմել է 24.0%: Նախորդ տարվա համեմատ աճ է գրանցվել հանքագործական արդյունաբերության ոլորտում՝ շուրջ 252.1 մլն. դրամ, էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում՝ շուրջ 1682.5 մլն. դրամ, իսկ մշակող արդյունաբերության ոլորտում պահպանվել է նախորդ տարվա մակարդակը: Հաշվետու ժամանակաշրջանում աճը գրանցվել է կաշվե իրերի (15.1%), դեղագործական ապրանքների (35.4%), այլ ոչ մետաղական արտադրատեսակների (5.2%) արտադրության բնագավառներում:

2013թ. առաջին կիսամյակում մարզում արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կազմել է 66376.3 մլն. դրամ նախորդ տարվա 53969.4 մլն. դրամի փոխարեն կամ աճը կազմել է 23.0 %:

Արտադրանքի իրացման ծավալների մեջ 2013թ. հաշվետու ժամանակաշրջանում իրացումը ներքին շուկայում կազմել է 50891.6 մլն. դրամ, իսկ արտահանումը՝ 15484.7 մլն. դրամ, որից ԱՊՀ երկրներ է արտահանվել 13496.3 մլն. դրամի և այլ երկրներ՝ 1988.4 մլն. դրամի արտադրանք: 2013թ. առաջին կիսամյակում արտահանման ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 396.0 մլն. դրամով:

մլն. դրամ

| | 2012թ. I կիսամյակ | 2013թ. I կիսամյակ | շեղում +/- | % |
|-----------------------------|----------------------|----------------------|---------------|-------|
| Թողարկված արտադրանքի ծավալը | 53766.1 | 66669.3 | 12903.2 | 124.0 |
| Արտադրանքի իրացման ծավալը | 53969.4 | 66376.3 | 12406.9 | 123.0 |
| Արտահանման ծավալը, որից՝ | 15088.7 | 15484.7 | 396.0 | 102.6 |
| ԱՊՀ երկրներ | 13507.8 | 13496.3 | -11.5 | 99.9 |
| այլ երկրներ | 1580.9 | 1988.4 | 407.5 | 125.8 |

2013թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզում իրականացվել են 10814.8 մլն. դրամի կապիտալ ներդրումներ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 1683.8 մլն. դրամով և կազմում է հանրապետությունում իրականացված կապիտալ ներդրումների 8.7%-ը:

2013թ. առաջին կիսամյակում իրացվել է 3.5 հազ. տոննա միս (կենդանի զանգվածով)՝ նախորդ տարվա չափով: Հաշվետու ժամանակաշրջանում արտադրվել է 33.7 հազ. տոննա կաթ (նախորդ տարվա համեմատ աճել է 5.3 %-ով) և 68.5 մլն. հատ ձու (կազմել է նախորդ տարվա 92.7 %):

Ներկայումս մարզում գործում են 5 սպառողական ապրանքների և 2 գյուղարտադրանքի շուկաներ: Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2013թ.

առաջին կիսամյակում կազմել է 19614.2 մլն. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավել է 4067.1 մլն. դրամով:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կազմել է 10393.6 մլն. դրամ նախորդ տարվա 12346.4 մլն. դրամի դիմաց:

2013թ. հուլիսի 1-ի դրությամբ գրանցված գործազուրկների թիվը կազմել է 5600 մարդ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 400-ով: